



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Ուրբաթ, Հոկտեմբեր 13, 2006-ի առաւօտուն, Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանը Ազգային Առաջնորդարանի Էնսինոյի առժամեայ գրասենեակին մէջ, ընդունեց այցելութիւնը «Հայաստան Հիմնադրամ»ի Վարչութեան անդամներէն, ատենապետուհի՝ Մարիա Մեհրանեանի, Փոխ-ատենապետ՝ Արա Ակիշեանի, Վարիչ Տնօրէն՝ Սարգիս Գոթանճեանի եւ Չարգացման Տնօրէն՝ Կրէկ Պոյրազեանի, խորհրդակցելու Հայաստան Հիմնադրամի 2006 տարուան Թելեթոնին Ազգային Առաջնորդարանի ու իր յարակից մարմիններուն զօրակցութեան ու մասնակցութեան մասին: Հանդիպման ներկայ էր նաեւ Տիար Բեգլար Փիլաւճեան, որպէս Ազգային Առաջնորդարանի ներկայացուցիչ:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր գնահատանքն ու քաջալերանքը յայտնելով Հիմնադրամի պատասխանատուներուն յաջողութիւն մաղթեց յառաջիկայ Թելեթոնին, որ այս տարի եւս տեղի պիտի ունենայ Ամերիկայի Գոհաբանութեան օրը:

PRELATE MEETS WITH ARMENIA FUND
BOARD MEMBERS AND ADMINISTRATORS

On the morning of Friday, October 13, the Prelate welcomed board members and administrators of Armenia Fund, to the temporary Prelacy offices in Encino.

The Prelate met with Armenia Fund Chairperson Maria Mehranian, Vice-Chairman Ara Agishian, Executive Director Sarkis Kotanjian, and Director of Development Greg Boyrazian, to discuss the support and participation of the Prelacy and its affiliates at this year's Telethon.

Mr. Peklar Pilavjian, Armenia Fund Executive Board member, also participated in the meeting as a representative of the Prelacy.

The Prelate offered his commendation and encouragement to the members and wished them success at the Telethon, which will take place on Thanksgiving Day.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ
ՎԱՐժԱՐԱՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԺՈՂՈՎԸ

Շաբաթ, Յոկտեմբեր 14-ին, կեսօրէ ետք ժամը 2-ին, Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Կիրակօրեայ Վարժարաններու Բ. Հաւաքի կազմակերպիչ յանձնախումբի աշխատանքային ժողովը տեղի պիտի ունենայ Սանթա Աննայի, Archangel Michael Coptic եկեղեցոյ մէջ:

Յայտնենք, որ Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով այս ժողովին ներկայ պիտի ըլլան Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներն ու Թեմիս Կիրակօրեայ վարժարաններու ներկայացուցիչները:

MEETING OF THE ORIENTAL ORTHODOX SUNDAY SCHOOL COMMITTEE

On the afternoon of Saturday, October 14, the organizing committee of the Oriental Orthodox Sunday School 2nd Spiritual Gathering will meet at Archangel Michael Coptic Orthodox Church in Santa Ana to finalize the details of the gathering that is to be held on Saturday, October 28, at the aforementioned church.

Under the direction of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, the directors of the Prelacy Christian Education Department, along with representatives of Prelacy Sunday Schools, will attend the meeting.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՆՊԱՍՏ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԾԵՐԱԿՈՅՏԻ ԱՆԴԱՄ ՉԱԳ ՓՈՒԶԻԿԵԱՆԻ

Կիրակի, Յոկտեմբեր 15-ին, կ.ե. ժամը 2-ին, ի նպաստ նահանգային ծերակուտական Chuck Poochigian-ի ընդունելութիւն մը տեղի պիտի ունենայ Ազգ. Առաջնորդարանի բարերարներ՝ Տէր եւ Տիկին Րալֆ եւ Սաւի Թիւֆէնքեաններուն բնակարանին մէջ, Կլենտէյլ:

Առաջնորդ Սրբազան Հայրը ընդառաջելով նախապէս իրեն տրուած հրաւերին, իր գնահատանքը կը յայտնէ Տէր եւ Տիկին Րալֆ եւ Սաւի Թիւֆէնքեաններուն եւ իր օրհնութիւնները կը փոխանցէ ծերակոյտ Poochigian-ին:

Յայտնենք, որ Ծերակուտական Poochigian թեկնածու է Զաւիֆորնիա նահանգի ընդհանուր դատաւոր պաշտօնին (attorney general):

RECEPTION IN SUPPORT OF STATE SENATOR CHUCK POOCHIGIAN

On the afternoon of Sunday, October 15, a reception will be held in support of State Senator Chuck Poochigian at the home of Mr. and Mrs. Ralph and Savey Tufenkian in Glendale.

The Prelate conveyed his blessings to Mr. and Mrs. Tufenkian and his support to Senator Poochigian in his campaign bid for Attorney General of California.

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ECUMENIC ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Չորեքշաբթի, Յոկտեմբեր 18-ի երեկոյեան ժամը 7-ին, Կլենտոյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ յարկին տակ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազանին, տեղի պիտի ունենայ միջ-եկեղեցական Ecumenical եւ երիտասարդական յանձնախումբերու ժողովը՝ առաջնորդութեամբ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքի վարիչներուն:

Օրակարգի վրայ նկատի առնուած է նաեւ Դեկտեմբեր 2-3 2006-ի շաբաթավերջին Տիթթոյիթի մէջ տեղի ունենալիք երիտասարդական սեմինարի աշխատանքներն ու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Յայրապետին հետ նախատեսուած հանդիպումը:

MEETINGS OF THE PRELACY ACYA CENTRAL AND ECUMENICAL COMMITTEES

On the evening of Wednesday, October 18, under the auspices of the Prelate and with the participation of the Christian Education Department directors, the ACYA Central and Ecumenical committees of the Prelacy will hold their meetings at St. Mary's Church in Glendale.

Among the items on the agenda is the upcoming gathering of the youth with H.H. Catholicos Aram I, scheduled for December 2nd and 3rd in Detroit.